Ա. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 15 ՕԳՈՍՏՈՍ 1898 ԹԻՒ 54

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլգարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար
տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԸ

—)(—

Գրութիւնք և չեն տրուիր

—)(—

Դասուցման տոմար 20 սանթիմ է. Երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

# ՇԱՐԺՈՒՄ

Դամակ և դրամ դրկել
Խմբագրութեան հասցէին

—

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

—

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)( ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ )(

Отговорникъ: Н. Драгулевъ.

)( ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ )(

## ԻՆՉ ԱՆՈՒՆ ՏԱԼ

—).(—

Բաւական ժամանակ է ինչ արտասահմանի հայ մամուլի մի մասը կատաղի արշաւանք է սկսել ռուսահայերի, մանաւանդ ռուսահայ յեղափոխականների դէմ, սրանց իբր օտար ներկայացնելով տաճկահայերի առաջ։

Թէ ի՞նչ դիտաւորութեամբ և ի՞նչ տրամաբանութեամբ այդ պարոնները յանդգնում են Ռուսահային «օտար» տիտղոսով մկրտել և ամէն ճիգ թափում ռուսահայ յեղափոխականին սատրացնել իր տաճկահայ եղբայրների աչքում՝ մեզ համար շատ հասկանալի է։

Դժբախտաբար այդ գաղտնիքը անհասկանալի է մնում տաճկահայ ամբոխի համար՝ որը, ինչպէս ամէն ազգի ամբոխ, անընդունակ է թափանցելու կեանքի թէ լաւ և թէ վատ երեւոյթների խորքերը և հասկանալ նրանց գաղտնիքը։

Բայց մի՞թէ այնքան էլ դժուար է հասկանալ այդ սեւացած սրտերում թագնված գաղտնիքը։ Չէ՞ որ ամէն մի հայի համար պարզ է որ հայը ամէն տեղ հայ է, իսկ նրա միակ հայրենիքը Հայաստան երկիրը, որի փրկութեան համար աշխատելու իրաւունք և պարտականութիւնը ունի իւրաքանչիւր մաքուր, գաղափարական և սեփական ազատ ու բարեկարգ հայրենիք ունենալու տենչ ունեցող հայը։

Ինչո՞ւ այսօր ռուսահայութեան թշնամի գրողները երբեմն կեղծախ ու վախով սգում են տաճկահայերի դժբախտ վիճակը, երբեմն էլ անօթի աղուէսների պէս ուզում են իրանց ճանկերը խրել ռուսահայ սրտերի մէջ. սրտերի, որոնք նոյնքան անկեղծ կերպով են բաբախում տաճկահայի ազատութեան համար, որքան ամէն մի տաճկահայի սիրտը։

Ռուսահայ եղիտասարդութեան այդ ոխերիմները զգալով և տեսնելով որ զրպարտութիւններով չեն կարողանում իրանց նպատակին հասնել, կոկորդնեերը պատռելով ճիգ են թափում տաճկահային համոզել որ բոլոր դժբախտութիւնների պատճառը ռուսահայ յեղափոխականները են։

Բայց միթէ արեւի պէս պարզ չէ՞ որ տաճկահայի ներկայ դժբախտութիւնների բուն պատճառներն էին Թուրքի որոշ հայաջինջ քաղաքականութիւնը և յեղափոխական շարժումները. իսկ այդ շարժումները ոչ ռուսահայ և ոչ տաճկահայ անհատների խելքի ծնունդ են, այլ դարերով հարստահարված և գերեզմանի դուռը հասած հայ ժողովրդի կենսական պայմանների արդիւնքը։

Միթէ չը պէտք է ուրախանա՞լ որ այդ մահամերձ հարաւատ ժողովուրդը անդունդի բերանը հասնելուց յետոյ՝ զգաց որ ինքը դեռ ուժ ունի ապրելու և թէ իր որոշ պատմական դերը դեռ չէ վերջացրել. զգաց և մի ցնցումով ետ ընկաւ անդունդի բերանից ու բռնեց այն ճանապարհը, որը միայն կարող է նրան մարդավայել կեանքին հասցնել։

Եւ երբ ժողովուրդը գտել է իր կեանքը վերանորոգելու իսկական ու վեհ, թէեւ փշոտ, ճանապարհը և պարտաւոր է շարքերը սեղմել ու առաջ գնալ իր վաղուց դուրգուրած իղձերը իրագործելու համար՝ վեր կենալ և ստոր պառակտիչի դերը կատարել, մի՞թէ կատարեալ չարագործութիւն չէ։

Այսպիսի նեղ և ճակատագրական վայրկեաններում՝ երբ ամէն մի հայ, ուր էլ որ ապրելիս լինի, ինչ դաւանանք էլ որ ունենայ, պարտաւոր է իր մտաւոր, բարոյական և նիւթական ուժերը լարել դժբախտ հայրենիքին դրական օգնութիւն հասցնել, վեր կենալ և հայհոյանքով պառակտման սերմեր ցանել հայ ժողովրդի մէջ՝ մի՞թէ ոճրագործութիւն չէ։

Ճշմարիտն ասած, մենք համոզում ենք որ հայ ժողովուրդը դեռ կարող է իր ծոցում պահել այդպիսի արարածներին՝ որոնց չը դիտենք թէ ինչ անուն տանք։

ՎԱՐԴՈ

——).(——

## ՕՐԸ ՕՐԻՆ

### ՕԳՈՍՏՈՍ 14

—

Մինչդեռ ուրիշ ազգեր յաղթութեան և փառքի թուականներ ունին զոր կը տօնեն մինչև երկինք բարձրացնելով խանդագին զգացումները, մենք, հայերս, լեղի արցունքներ ունինք թափելու գետին, որովհետեւ սուգի և վշտագին յիշատակներու տարեդարձներ միայն կան մեր առջև։

Սասունի ջարդը, Վանի հրկիզումը, ամբողջ Հայաստանի աւերը իր փոքրագոյն դիւղերով և աւաններով, այնքան դէպքեր են որոնք մեզի համար տարուան ամէն մէկ ժամուն ու րոպէին արիւնի ու մխիթարի տարեդարձներու հանդամանքը կընծայեն։

Օգոստոս 14ը մէկն է այդ թուականներէն։ Թէ և արդէն երկու տարի անցած է, սակայն ամէն հայ ուր որ ալ ապրի, ինչ պայմաններու մէջ ալ գտնուի, սարսուռով կը յիշէ այս օրը երբ նախկին Բիւզանդիոնը, հիմա աշխարհիս ամենէ խուժդուժ ցեղին ձեռքը ինկած դժբաղդ դշխոյ, իր գոգը ողողեց հայու ազնիւ արիւնով։

Յիշողութիւնը չարչարելու պէտք չկայ ահռելի տռամին քստմնելի պարագայները պատկերացնելու համար։ Արիւնոտ յիշատակները առջի օրուան չափ թարմ են և պիտի մնան սերունդէ սերունդ մեր մէջ։

Ո՞վ կրնայ մոռնալ սարսափի այն ուրականը, քրդերու և զինւորներու վոհմակները, բարձրագոյն կամքերու հլու գործակատարներ, որոնք, քաղաքին ամէն կէտերուն վրայ. իրենց դժոխային մահակներով և սպանող դընդակներով իրարու հետ կը մրցէին թարմ կեանքեր հնձելու գործին մէջ, աւելի մեծ թուով հայ սպաննած ըլլալու փառքին տիրելու համար։

Բայց, այս անէծքի, ոխի, արցունքի խառնակութենէն չէ՞ք որոշեր նաև ուրիշ ձայն մը, երկնային որոտի պէս բան մը, որ կարծես զամէնքը կը լռեցնէ ամէնուն վրայ իշխելու համար. այն ուժը որ չփախիր՝ այլ կը հալածէ, չաղաչէր՝ այլ կը սպառնայ, չիլար՝ այլ կը լացնէ, որ անտեսանելի և բազմագլուխ վիշապի մը պէս կը գալարուի իր ոլորումներուն մէջ ամենէն զօրաւորներն իսկ ահաբեկելով. որ, անձնուրացութեան, հերոսութեան, բարձր իտէալներու արտայայտութիւնն է և որուն կըսեն բողոքի և վրէժի ձայն, յեղափոխութիւն։

Օգոստոս 14ը այն օրն է ուր հայկական հաղարաւոր դիակներ ընծայ բերուցան մարդակեր կուռքին, այլև այն օրն է ուր տաճիկ կառավարութեան և անոր հետ աշխարհի միւս մեծերուն պատոյ յետին բեկորներն ալ գերեզման տարուեցան։ Որքան տխրութիւններով այնքան ալ բերկրանքով լեցուն է մեզի համար օգոստոս 14ը, որովհետև այն օրերէն մէկն է ուր հայը իր աղատութիւնը, իր տառապանքներուն վախճանը պահանջեց աշխարհէն և որ աւելին է՝ փորձով ցոյց տուաւ թէ իր սրտին մէջ կը կրէ այն արիութիւնը որ այսպիսի վեհ և անբռնաբարելի պահանջում մը ընելու իրաւունք կուտայ։

Փառքի, սիրոյ և երեսխտեաց դաւնեներ դնենք Հայաստանի այն սիրելի զաւակներուն շիրմին վրայ և չանանք անոնց ոսկերոտիքը օր մը փոխադրել հայրենի հողը մեր նախնիքներու մնացորդներուն քով։

Զը տրտնջանք, չը տրտմինք այն տառապանքներուն համար որոնց ենթարկուեցանք. անոնք բնական հետեւանքն են ազգի մը համար որ գերութեան չղթայները թօթափելու կը ձգտի։

Զընկրկինք, այլ միշտ առաջ քալենք արհամարհելով մահը, և մենք մեր վրայ ամփոփինք ինչպէս կընէ վագր մը յարձակելէ առաջ։ Դադրինք լալէ ինչ որ անօգուտ է, դադրինք զիրար բզկտելէ ինչ որ ոճիր է, և ականջ կախենք հայկական գերեզմաններէ բղխած անհուն աղաղակին։ Հոն պարկողները

հանգիստ չեն և մեռնողի վերջին նուիրական բղձանքով կը պահանջեն որ լալէ աւելի բան մը ընենք, կռուի՛նք, գլուխ հանելու համար իրենց սկսած գործը, ազգային այն մեծ նպատակը որ հինգ դարէ ի վեր սերունդէ սերունդ կը կտակուի։

Եւ այն ատեն, բոլոր այն թուականները որ այսօր մեզի տխուր տարեդարձներ կը թուին, մէյ մէկ խնդութեան օրեր պիտի դառնան, Մասիսի ոտքերուն առջև տօնելի։

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 15 Յուլիս

Ս. Էջմիածնի գանձարանէն 200,000 րուբլի անհետանալուն ծանօթ խնդիրը իմ անունիս և «Մշակ»ի և մշակականներու շուրջը մեծ աղմուկ բարձրացուց. «Մասիս» զիս «անօրակելի»... խաբեբայ և «Բիւզանդիոն» ապուշ անուանեց։

Այս լիրբերան և անօրակելի հայհոյանքներուն իմ միակ պատասխանս պիտի լինի ստորեւ արտագրած նամակս, որուն հեղինակը իր ստորագրութեան տակ համարձակ հրապարակ գալու ազնուութիւնը ունեցաւ։ Այս նամակը բացարձակապէս կը պարզէ իմ խաբեբայ և ապուշ մը չըլլալս, և հեղինակը զինքը հալածողներուն հետ դէմ առ դէմ և ճակատ առ ճակատ գալով, ինձ բոլորովին անպատասխանատու երկրորդական դեր մը կը յատկացնէ։

Այս առթիւ պարտք կը համարիմ յայտարարելու հայ հասարակութեան՝ թէ «Մասիս» իմ իրեն յղած երկտողս հրատարակելու համարձակութիւնը և ազնուութիւնը չունեցաւ և «Բիւզանդիոն» իրեն յղած նամակիս այն մասը, որ իր անազնուութիւնը երեւան կը հանէր, ջնջելով հրատարակեց։ Ես շատ ուրախ եմ, որ յարուցած խնդիրս ինձ և շատերուն ճշմարիտ փորձաքար մը եղաւ Բիւզանդ Քէչեանին ի՛նչ տեսակ նոր արարած մը ըլլալը պարզելով։

Պ. Համբարձում Առաքելեանցին այս նամակը ռուսահայ և թրքահայ թերթերու մէջ լոյս տեսնել կարելի չըլլալով, զայն կը յղեմ անկողմնակալ թերթիդ հրատարակութեան, կանխաւ յայտնելով շնորհակալիքս։

ԴՈԿՏՈՐ Կ. Յ. ՓԱՇԱԵԱՆ

* * *

Պ. Հ. Առաքելեանցի նամակին պատճէնը.

«Թող իմ երկարատեւ լռութիւնը ձեզ զարմանալի չը թուի. ես սպասում էի որ թէ՛ Բիւզանդիոնը եւ թէ Էջմիածնի Վեհարանի վարձկան պաշտպանները հրապարակ հանեն իրանց բոլոր փաստերը, գործածեն իրանց բոլոր զէնքերը. ես սպասում էի տեսնել, թէ մինչեւ որ աստիճանի պէտք է հասնէ այդ մարդկանց անամօթութիւնը, լրբութիւնը եւ թիւրքաց կառավարութեան նման անամօթաբար ամէն բան ուրանալու սովորութիւնը. Ինձ ծիծաղելի թուաց մանաւանդ Էջմիածնի այժմեան աւազակապետ—Խորէն Եփ. Խրիմեանի ձեզ գրած նամակը. Ի՛նչ անմեղ գառնուկ է ձեւանում. Նա կարծում է, որ ոչ ոք չը գիտէ, թէ ինչպիսի ահագին գումարներ է փոխադրում իր անունով Քրէտի Լիոնէի բանկը. բայց ո՞ւմ գումարներն են այդ. միթէ Վանից բերեց հետը կամ Երուսաղէմից»:

«Էջմիածինը այս անգամ կարողացաւ օգտուել ձեր գործած մի ձեւական սխալից եւ խայտառակ, ինչպէս ասում են, միջից դուրս պրծնել: Եթէ դուք, յարգելի բարեկամ, ինձ յայտնած լինէիք, թէ մտադիր էք իմ հաղորդած տեղեկութիւնները հրատարակել եւ եթէ, իսկապէս, մի անգամ եւս ճշդէիք ինձանից լսածները ինձ հարցնելով, խնդիրը այդպիսի ելք չէր ստանայ: Թէ Էջմիածինը Խրիմեանի օրով դարձել է աւազականոց, թէ ոչ միայն 200,000, այլ գուցէ կրկնակին մտել է վեհարանը եւ անհետացել, զանազան Խորէն էֆէնտիների սեպհականութիւն դարձել, թէ Վահան վարդապետը կատարել է զեղծումներ, խարդախութիւններ—այդ ամէնը զուտ ճշմարտութիւններ են, բայց որովհետեւ դուք իմ ասածներս սխալ ըմբռնելով, հարցը սխալ դրէք Բիւզանդիոնի մէջ, ձեւական կողմից, ուստի եւ Էջմիածնի աւազակները օգուտ քաղեցին այդ սխալից եւ խնդրին իրանց համար նպաստաւոր կերպարանք տուին: Դուք չփոթել էք Էջմիածնի վեհարանի եւ սինոդի գանձարանները: Ինձ շատ ուշ աջողուեց ձեռք բերել ձեր յօդուածը Բիւզանդիոնին մէջ տպուած, 30 Նոյեմբեր: Այդ յօդուածում դուք այնպէս էք գրել, որ կարդացողը կարծում է թէ սինոդի գանձարանից, սնտուկը բանալով, գողացել են 200,000 րուբլի, մինչդեռ այդպիսի բան չէ եղել եւ ես եւս այդպիսի բան չէի կարող հաղորդել ձեզ. բացի դրանից դուք մոռացել էք յիշելու մի ամենակարեւոր հանգամանք, այն, որ երբ պրոկուրորը գնաց կաթողիկոսին, խնդրելով թոյլ տալ յանկարծակի քննել գանձարանը, կաթողիկոսը ամբողջ 17 օր ձգձգեց խնդիրը եւ միայն 17 օրից յետոյ յայտնեցին պրոկուրորին, որ կարող է քննել: Իսկ այդ ձգձգումը հարկաւոր էր նրա համար, որ Վահան վարդապետը եւ Խորէն Խրիմեան գնան Երեւան փող գտնելու տոկոսով եւ պակասը լրացնելու: Այդ դէպքից յետոյ, ի հարկէ, սինոդի գանձարանի վերաբերմամբ, այլ եւս շատ զգուշ էին, վերցրածը տեղն էին դրել, թէեւ պրոկուրորի քննութիւնը այնուամենայնիւ շատ զեղծումներ երեւան հանեց, կատարուած Վահան վարդապետի ձեռքով: Սինոդը հերքում է այդ ամէնը, բայց այդ հերքումը ոչ մի նշանակութիւն չունի, քանի որ պրոկուրորը լուռ է եւ ոչինչ չէ հերքում: Բացի դրանից դեռ 1897 թիւ Մշակի 73 թւում տպուեց, որ Վահան վարդապետը մեղադրւում է պրոկուրորի կողմից գողութեան եւ զեղծումների մէջ եւ սակայն սինոդը ոչ մի հերքում չը գրեց. իսկ այդ մայսին էր: Այդ կէտը շատ ուշագրաւ է:»

«Բայց, կրկնում եմ, խնդիրը սինոդի գանձարանի մասին չէ, այդ գանձարանը, բարեբախտաբար, գտնուելով կառավարութեան հսկողութեան ներքոյ, չէ կարող կողոպտուել, բայց խնդիրը այն մօտ կէս միլլիոն րուբլի գումարի մասին է, որ Խրիմեան կաթողիկոսը իր Էջմիածին մանելու օրից մինչեւ այժմ ստացել է զանազան անձերից եւ տեղերից Էջմիածնի վանքի վերաշինութեան, Ճեմարանի, Թիւրքահայ գաղթականների եւ այլ ազգային գործերի ու բարեգործական նպատակների համար: Ո՞ւր է գնացել այդ ահագին գումարը. Ալլահը միայն գիտէ, Կաթողիկոսը եւ Խորէն Էֆէնտին... Այս միայն յայտնի է, որ այդ ահագին գումարից 5,000 րուբլի ուղարկել է Իզմիրլեան Պատրիարքին, մօտ 10,000 րուբլի գործադրել է մի գոմաձեւ շինութիւն կառուցանելու, իբրեւ թանգարան—մի շինութիւն, որ ամենեւին կարիք չը կար կառուցանելու՝ — եւ մի քանի հազար րուբլի եւս տրուած է գաղթականներին, ընդամէնը 20—25,000 րուբլի: Հապա՞ մնացած հարիւր հազարները, առնուազն 200,000ը: Ահա որ տեղ է գողութիւնը, ահա որտեղ das Hund ist fegraben: Եւ դուք հարցը ահա այսպէս պէտք է դնէիք. «Էջմիածնի վեհարանում կատարւում են սոսկալի զեղծումներ, ազգային եւ եկեղեցական ահագին գումարներ, ամենաքիչը 200,000 րուբլի վատնուած են. բացի դրանից սինոդի գանձապահ Վահան վարդապետը զեղծումներ եւ խարդախութիւններ է կատարել»: Ձեր առաջ բերած խօսակցութիւնը Վահան վարդապետի եւ պրոկուրորի մէջ միանգամայն ճիշդ է, բայց խնդիրը 200,000 րուբլիի մասին չէ եղել, այլ ուրիշ զեղծումների մասին:

«Ուրեմն տեսնում էք, որ 200,000 րուբլի գողացուած է ոչ թէ սինոդի գանձարանից, այլ ազգի կամ վեհարանի գանձարանից: Նախկին կաթողիկոսների ժամանակ սինոդի եւ վեհարանի գանձարանը մի էր. ինչ գումար, որ ստանում էր կաթողիկոսը իսկոյն յանձնում էր սինոդին. բայց Խրիմեանի օրով կաթողիկոսը յանձնում է սինոդին միայն այն գումարը, որ ինքն ցանկանում է. Նրան շրջապատող գողերը, տեսնելով որ գանձարանի մի լինելու պատճառով, գողութեան համար շատ նեղ ասպարէզ է մնացել, յորդորում են կաթողիկոսին իր անունով ստացւող գումարները չը յանձնել սինոդի գանձարանին, որովհետեւ «սինոդը ազգային հաստատութիւն չէ»: Գողութիւնը ծածկելու համար դիմում են ազգասիրութեան...: Եւ ահա Էջմիածնի գանձարանը բաժանվում է, երկուքի է վերածվում»:

«Վեհարան մտած ահագին գումարների կլանումը այնքան հանրածանօթ իրողութիւն է, որ այժմ այլեւս ոչ ոք չէ վարանում նոյն իսկ մամուլի միջոցով յայտնել այդ մասին: Դեռ նորերս Մշակի 48 թիւի մէջ տպուած մի նամակում Բժ. Գէորգ Թումամշեան յայտնում է. «Ո՞ւր են այն հարիւր հազարները, որ վերջին տարիները յանուն գաղթականների Էջմիածինը ստացաւ ազգից»: Շատ որոշ եւ պարզ հարցմունք է. քանի անգամ եղած է այդ հարցմունքը, բայց վեհարանականները զաքարէական լռութիւն են պահպանում. Նրանք, այդ գողերը գիտեն, որ հերքել չեն կարող, որովհետեւ նոյն իսկ յականէ յանուանէ յայտնի են փող տուողների անունները: Միայն այս եւ այն անկիւնում լուրեր են տարածում, թէ հաշիւ տալ անկարելի է, որովհետեւ գումարները ծախսուած են ազգային գործերի վրա. կատարեալ ստութիւն, ոչ մի կոպէկ ազգային գործի կամ դատի վրայ չէ ծախսուած. այդ ապացուցուել է քննութեամբ, որ կատարել են ոմանք, կամենալով վերահասու լինել ճշդութեան:»

«Գալով այն խնդրին, որ վեհարանի պնակալէզները յարուցին, թէ 200,000 րուբլի գողութեան լուրը «մշակականների» գործ է, որոնք իբր ինձ յատկապէս այդ նպատակով ուղարկեցին Թավրիզ եւ ես, մոլորեցնելով ձեզ, տպագրել տուի Բիւզանդիոնի մէջ, ձեզ ամենից լաւ յայտնի է նրա ստութիւնը: Ես երբեք չեմ հաղորդել ձեզ որ եւ է լուր Բիւզանդիոնին ուղարկելու համար, նոյն իսկ կասկած չեմ տարել, թէ դուք մտադիր էք որ եւ է բան հաղորդել այդ լրագրին, այլ ես ձեզ մասնաւոր խօսակցութեան մէջ յայտնել եմ այն տեղեկութիւնները, որոնք կրկնեցի այժմ, այս նամակիս մէջ: Ես եւս միւսների նման Թիֆլիսում իմացայ, որ Բիւզանդիոնում մի յօդուած կայ տպուած Էջմիածնի 200,000 րուբլի գողութեան մասին եւ մտածեցի, որ, անշուշտ, Թավրիզում, մէկը, լսելով իմ պատմածները, եւ չփոթելով տեղեկութիւնները, հաղորդած կը լինի եւ երբ Բիւզանդիոն ինքն վաւաբար յայտնեց իր թղթակցի անունը, այդ ժամանակ միայն իմացայ, որ գրողը դուք էք եղել: Պարզ է, որ ոչ մի «մշակական» այդտեղ խառն չէ եւ ոչ ոք չէ մտածել սուտ լուր հնարել:»

«Գալով ձեր ազնուութեանը, որ դուք, սկզբունքի պաշտպանութեան տեսակէտից, չը կամեցաք երեւան հանել ձեր տեղեկութիւնների աղբիւրը, եւ դատապարտուեցիք Բիւզանդիոնի վարմունքը, ես, այնուամենայնիւ, խնդրում եմ եւ իրաւունք եմ տալիս ձեզ այժմ կամ ապագայում հրատարակութեան տալ իմ այս նամակը մամուլին եւ այլ միջոցով ցոյց տալու համար, որ ոչ ես, ոչ դուք եւ ոչ որ եւ է մշակական երբեք նպատակ չէ ունեցել Էջմիածինը չարաբանել եւ սուտ լուրեր հնարել, այլ մի ակներեւ ճշմարտութիւն քարոզել եւ ցոյց տալ, որ Էջմիածինը դէպի անդունդ է գահավիժում իր այժմեան գողերով եւ կեղտոտ զզուելի րէժիմով»:

Ընդունեցէք, եւ այլն

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Թիֆլիս, 31 Մարտ 1898

Նիւ-Եորք, 5 Օգոստոս

Յաղթուած Սպանիան քանի մը օր առաջ Ուաշինկթընի ֆրանսական դեսպան Քամպօնի ձեռքով հաշտութեան առաջ ներկայացուց Մ. Նահանգաց Նախագահին, ըսելով. «Սպանիա կը կարծէ թէ, բաւական կռուեցաւ, քիչ մըն ալ խօսիլ կուզէ ձեր կառավարութեան հետ և կը փափագի գիտնալ թէ ի՛նչ պայմաններով կը յօժարիք խաղաղութիւնը վերահաստատելու»։

Նախագահը, կառավարութիւնը, մամուլը և 70 միլիոն ժողովուրդը երեք օր խորհեցան պայմաններուն վրայ ու Նախագահը դեսպանին պատասխանեց թէ հաշտութիւնը կընդունի արդէն ծանօթ պայմաններով, որոնք Սակասդայի Նախարարութիւնը

համակերպեցաւ առանց այլ եւ այլութեան։ Եւ ասոր վրայ Պ. Մաք Քինլի հրաման ըրաւ իր յաղթական հրամանատարներուն թշնամութիւնները դադրեցնելու։

Միայն թէ պայմաններու վերջինի մասին Ամերիկեան ժողովուրդէն և մամուլէն մաս մը կառավարութեան հետ համակարծիք չեն. ազդեցիկ թերթեր և ժողովրդի կարեւոր մէկ մասը կը պնդեն թէ Փիլիպպեան կղզիները կրկին Սպանիական լուծին յանձնելը ամենամեծ անպատուութիւն պիտի ըլլայ Մ. Նահանգաց համար։ Կառավարութիւնն ալ կը փաստէ թէ քաղաքական սխալ մըն է մինչեւ Խաղաղականի այդ անկիւնը Ամերիկեան բանակներ պահելը և հարիւրաւոր կիսավայրենի կղզիներու կառավարութեան պատասխանատուութիւնը վրան առնելը։ Նկատելով շատ մը ժողովրդական թերթերու և ժողովրդի մէկ նշանաւոր մասին կառավարութեան կարծիքին հակառակ ըլլալը, կը կարծուի թէ Փիլիպպեաններու կղզեցիներն ալ պիտի ունենան իրենց հանրապետութիւնը։

* * *

Եւ այսպէս Սպանիական մէկ թագուհին, 400 տարի առաջ, իր թանկագին զարդերը, գրաւ դնելով դրամ ճարելէ ետքը Քոլոմպոսին որպէսզի դայ և Ատլանտեանի այս անհունութեան մէջ անհուն աշխարհքներ գտնէ Սպանիական ազգին համար, այսօր ալ, Սպանիական ուրիշ թագուհի մըն է որ իր մարգարիտի կաճերը ու պարանոցի ադամանդները կը ծախէ որպէսզի կարենայ իր բանակները փոխադրել Ամերիկեան կղզիներէն դէպի Սպանիա։

Քոլոմպոսի ահր և մարգարէութիւնը իրականացան։ Վերջերս անոր մէկ ինքնագիր նամակը գտնուած է որուն մէջ Սպանիոյ համար գանձեր գտնող, այլ շղթաներու տակ հեծող Քոլոմպոսը կը գրէ թէ՝ Սպանիական կառավարութեան անփոյթ և հարստահարիչ դրութիւնը օր մը պիտի տիրէ Ամերիկեան գաղթականութիւններուն մէջ և այս գաղթականութիւնները որոնք պէտք էին մայր երկրին գոհարները դառնալ, անոր աւերումը պիտի փութացնեն։

Իր գաղթականութիւնները կեղեքող, ու անոր արիւնով սնուող տղրուկ ազգի մը վախճանը այսպէս կ'ըլլայ։ Եւ միայն տոներու ազգը չէ որ այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ իր արժանի քայքայումին կենթարկուի։ Օսմանցիներու երբեմնի մեծ ահռելի կայսրութեան վիճակն ալ նոյնն եղած է։ Մինչեւ Վիեննայի դուռները պաշարող Սուլթանները այսօր նոյն իսկ իրենց գահը կորսնցնելու վտանգին մէջն են։ Քայքայողը կը քայքայուի։

Թ. Չ.

---

Վ. Էօստ. Ճնէ, 6 Օգոստոս

Կրնանք ըսել թէ տեղւոյս հայ գաղթականներուն կացութիւնը անտանելի է։ Տեղացի ազդեցիկ ազգայինները բնաւ պաշտպանութեան ձեռք մը չեն կարկառեր անոնց վրայ եւ կը նկատեն զանոնք իբրեւ օտարներ, մոռնալով թէ տառապեալ եղբայրներ են եւ ազգային աղետի զոհերը։

Անցեալները Շապին-Գարահիսարցի Յովհաննէս, երկաթուղիի գծին վրայ ճզմուելով մեռաւ չարաչար մահով։ Ո՛չ ոք հոգը ըրաւ գէթ հսկելու անոր պահանջներուն վրայ, իր թշուառ ընտանիքին փոքրիկ սփոփանք մը ընելու համար։

Ուրիշ հայ գործաւոր մը դարձեալ շոգեկառքի մը մէջ զարհուրելի մահով մը մեռաւ, վերի յարկէն նետուած կողով մը ընդունելով գլխուն։ Ասով ալ հետաքրքրուող չեղաւ։ Մէկ բառով, կարելի է ըսել թէ այս տեղի գաղթականները ճշմարտապէս որբ եւ անտէր են։ Վա՛յ ան հայուն որ նոյն իսկ թաթարի մը հետ կռուի բռնուի. ծեծն է իր բաժինը. իսկ կառավարութեան գլխաւորները սա պատասխանը միայն կրնգունին «նու ֆաշէ, նիմիք եէչ աֆարը» (մեռա չունի, դուրս ել)։

Ասկէց զատ, գաղթականներէն շատերը անցագիր չունենալով սաստիկ հալածանքի կենթարկուին եւ շատ անգամ երկրէն կարտաքսուին, երբ տաճիկ կեղեքող հիւպատոսին տարապայման պահանջքը գոհացնելու դրամ չունենան, ինչ որ ամենէն շատ կը պատահի։ Գովելի է միայն տեղւոյս քահանային ընթացքը որ ձեռքէն եկածը չխնայեր գաղթականները այս կարգի դժուարութիւններէ ազատելու համար։ Բայց այս չբաւեր։ Փափաքելի է որ այս տեղի պատուաւոր եւ ազդեցիկ ազգայինները աւելի պարտաճանաչ եւ կարեկիր ըլլան իրենց հալածուած ազգակիցներուն հանդէպ։

Փ. ՃԻԿՐԵԱՆ

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Տ. Մ. Եարըմեան, Փիչպուրկ. — Ղրկած գումարնիդ ձեր եղբօրը յանձնեցինք։

—Տ. Մուրաս Ճէրտէրեան, Սեբաստացի. — Ամերիկայէն եկած նամակ մը ունիք մեր հասցէին ղրկուած։

——)·(——

## ՄԱՀԱԶԴԱԳԻՐ

Անհուն ցաւով համակուեցանք վաղաժամ մահը իմանալով ողբացեալ Գրիգոր Գըլըճեանի որ անողոք հիւանդութեան մը զոհ գացեր է, Յուլիս 29ին, Աթէնքի հիւանդանոցին մէջ։ Մեր ցաւակցական անկեղծ զգացումները կը յայտնենք արի յեղափոխականին սգաւոր ծնողաց և բարեկամ ու զինակիցներուն։

Համօր. — Շարժումի առաջիկայ թիւին կը վերապահենք ողբացեալին զօրեղի կեանքին պարագաներուն վրայ մեզ յղուած գրութեան մը հրատարակումը։

## ՔՐՈՆԻԿ

—)·(—

Կաթողիկոսը քանի մը օր Սեւան մնալէ ետքը Տաթեւ պիտի երթայ այն տեղէն ալ Շուշի. հաւանական է որ Էջմիածին վերադառնայ ամսոյս վերջերը։ Կաթողիկոսին բացակայութեանը սինոդի նախագահի պաշտօնը պիտի կատարէ աւագ անդամ Աբիստակէս եպս. Դաւթեան։ Էջմիածնէն 5 վերստաչափ տեղ, կաթողիկոսին ուղեկցեր է վանքի միաբանութիւնը կառքերով ինչպէս նաեւ ձիաւորներու խումբ մը։

Բոլոր ատոնք գրաւուած դրպրոցներուն օգուտ մը ունի՞ն․․․

—Ռուս հրապարակագիր մը «Նով. Վրէմիա»ի մէջ ընդարձակ յօդուածով մը ցոյց կը յայտնէ ոչ-ռուս հպատակներու վերաբերմամբ կառավարութեան բռնած արդի քաղաքականութեան համար։

Յօդուածագրին կարծիքով,

## ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (30)

Երկրորդ առաւօտեան արեւի աչք խտղտեցնող ճառագայթը զարթեցրեց ինձ։ Աչքերս բաց անելուց յետոյ, զարմացած սկսեցի շուրջս նայել. առաջին անգամն էր որ բանտում էի գիշերում։ Սենեակիս, մերկ աղտոտ եւ սեւ բծերով պատերը—փտած տախտակներով յատակը—աղտոտ սարդի ոստայնով պատած անկիւնները շատ վատ տպաւորութիւն թողին վրաս։ Հագնուեցի, դուրս գնացի. ի հարկէ հսկող կավաղի ուղեկցութեամբ։ Նորից ներս եկայ եւ սկսեցի շրջագայել սենեակիս մէջ։

Այդ օրը այնպէս անցաւ. ո՛չ մի հարց ու փորձ եղաւ ռուս պաշտօնեաների կողմից։ Երեկոյեան՝ երբ մութն ընկաւ, յանկարծ դրանս մօտեցաւ մի մարդ եւ ասեց—հանգարտ եղէք, շատ հոգ մի՛ ընէք, ասոնք այդպէս են. առաջին անգամները խիստ են. մարդու անուն չաւաք հարց ու փորձի ժամանակ։—Խօսողը մի հայ տղայ էր, որին, տաճիկների պահանջով, ռուսները ձերբակալել էին իբր կասկածելի անձնաւորութիւն։

Այդ գիշերն էլ անցաւ խոհերի մէջ եւ զանազան ծրագիր կազմելով. վերջապէս երկրորդ օրը ինձ կանչեցին կոնսուլասի գրասենեակը եւ մի երկու սովորական հարցեր տալով ու իմ տուած պատասխանները արձանագրելով ստորագրել տուին անեմնագրութիւնը։

Դրանից յետոյ մի շատ տաղտկալի շաբաթ անցաւ ինձ համար։ Ամէն օր Նազիմը գալիս էր եւ ինձ իրանց յանձնել պահանջում. այդ ես իմանում էի մի երկու մշակների միջոցաւ։ Վերջապէս ձերբակալվելուս տասներորդ օրը, յանկարծ դուռս բացվեց, կէս օրից առաջ, եւ ներս մտաւ փոխ հիւպատոսը. ձեռքս սեղմելով բարեւելուց յետոյ, բաւական յուզուած կերպով յայտարարեց.

—Պատրաստվեցէք Պ. Վարդ-Պատրիկով, դեսպանի հրամանով ձեզ յանձնելու ենք Թուրքաց կառավարութեան, դատելու համար։

Յանկարծակի եկայ, չէի սպասում որ ուղղակի ինձ յանձնէին Թուրքերին. սպասում էի որ իրանց մօտ կը պահեն եւ միայն դատարան կը գնայի առանց Թուրքաց բանտում նստելու։

Բաւական յուզվեցի եւ զարմացայ. փոխ հիւպատոսը նկատեց այդ եւ ասեց.—մի՛ յուզվէք, դեռ ամէն բան կորած չէ կարելի համարել. Նրանք ձեզ չեն նեղացնի։—

Ռուսների կողմից, ինձ ուղղակի Թուրքերի բանտում նստեցնել տալու զաղտնիքը վերջը բացվեց։ Նրանք ինձ փոխում էին Բուլգարիայում ապրող մի ռուս յեղափոխական ինժիների հետ. Թուրքերը համաձայնել էին թոյլ տալ այդ պարոնին Պոլսում ձերբակալել։ Ինժիները ապրում էր Բուլգարիայում, Պոլսից նրան հեռագիր են խփում իր մի ընկերի անունով եւ Պոլիս հրաւիրում. ինժիները միամտաբար գալիս է եւ իսկոյն ձերբակալվում։

Շուտով պատրաստվեցի. մի քառորդ ժամից յետոյ կրկին եկաւ փոխ հիւպատոսը. դուրս եկանք եւ կառք նստեցինք. Նա պաշտօնական զգեստով էր. մեզ ուղեկցում էր կաւազը։ Հիւպատոսը քաղաքավարի էր եւ նոյն իսկ յուզված. շարունակ ինձ քաջալերում էր եւ սիգարներ առաջարկում։

Նա գլխաւորապէս խօսում էր այսպէս։—Ձեր դրութիւնը շատ վտանգաւոր է եւ գործը շատ բարդ, մենք ուղղակի ձեզ չենք կարող պաշտպանել, բայց ամէն ջանք գործ կը դնենք ձեր վիճակը մեղմացնելու համար։ Մեր դրագօմանը ամէն շաբաթ ձեզ կայցելէ. Թուրքերը չեն կարող ձեզ վրա բռնութիւն գործ դնել։—

Այդպէս խօսելով մենք աննկատելի կերպով կտրեցինք անցանք ոստիկանութեան նախարարութեան եւ ռուսաց դեսպանութեան միջեւ գտնված մեծ տարածութիւնը։ Յանկարծ կառքը կանգնեց։ Փոխ-հիւպատոսը կառքից իջաւ, որին հետեւեցի ես, եւ իսկոյն իմ թեւս անցնելով ինձ առաջնորդեց դէպի Նազըմի սենեակները։

Նազիմը դիմաւորեց մեզ, նախ խօսեց փոխ հիւպատոսի հետ. ապա աբեւելեան անուշ ժպիտը երեսին, որի կեղծ կամ անկեղծ լինելը դժուար է որոշել, դարձաւ ինձ.

—Բարեւ ձեզ, յուսով եմ որ գոհ կը մնաք մեզնից. դուք մեր միւսաֆիրը էք. խօսում էր ֆրանսերէն։ Սկսվեց խօսակցութիւնը։ Յանկարծ սերթուկիս գրպանից թղթի շրխշրխոցի ձայն եկաւ. խօսակցողները ուրախացան։ Նազիմը, լուրջ, պաշտօնական կերպարանք առաւ. իսկ փոխ հիւպատոսը ցաւակցական կերպով նկատեց «միթէ չէի՞ք կարող գրպաններիդ վրա լաւ ուշադրութիւն դարձնել»։

—Հանգիստ եղէք, պատասխանեցի ես նոյնպէս ռուսերէն, այս ձեր հրաւիրած բժիշկի դեղագիրն է հազիս դէմ։

Ապա հեգնական ժպիտը երեսիս, դեղագիրը իմ ձեռքովս յանձնեցի Նազիմին։

Խօսակցութիւնը վերջանալուց յետոյ՝ Նազիմը դարձաւ ինձ ասելով։

—Մուսիոյ Պատրիկով, եթէ կը բարեհաճէք, ձեզ համար նոր զգեստներ բերենք, ձերը հանեցէք։

—Բայց ինչո՞ւ. իմերս էլ բաւական նոր են. ի՞նչ կարիք կայ, պատասխանեցի ես։

(Շարունակելի)

ուսններուն սխալը այն է որ կը ճնշեն իրաւունքները, լեզուն, երբեմն և կրօնքը, որու պատճառով հիմա նկատելի կերպով յարութիւն կառնեն քաղաքական «ղաղարոսներ», որոնք կրնան «մռայլ ամպեր դառնալ հորիզոնի վրայ, կրնան նաեւ պայծառ արշալոյսներ դառնալ»։

—Յուլիսի մէջ Բարիզ գումարուած «Հաղորդութեան խորհրդի» համաժողովին մասնակցած է նաեւ հայ-կաթոլիկ եպիսկոպոս Թէրզեան։ Անգլիական շաբաթաթերթ մը կը հաղորդէ թէ Թէրզեան եպիսկոպոսը իրեն ճառին նիւթ ընտրեր է հայկական կոտորածները և նկարագրեր է թէ ինչպէս հայ մարտիրոս ժողովուրդը եկեղեցիներու մէջ խըմբուած մահուան կը սպասէր։ Ի վերջոյ ժողովին ուշադրութիւնը հրաւիրեր է Փոքր-Ասիոյ վիճակին վրայ։

—Սալմաստի նորընտիր առաջնորդ Տ. Դատեան որ ընթացիկ գործերու կարգադրութեան համար Խոյ ուղեւորած էր, անկէց Խօթուր պիտի երթայ բանի խալմացած հայերը վերստին մայրենի եկեղեցիին գիրկը առաջնորդելու։

—Սալմաստի քրդերը զգաստանալու միտք չունին ինչպէս կերեւայ։ Անցեալ ամիս երկու հայ երիտասարդներ ցերեկ ատեն զոհ եղեր են անոնց դրնդակներուն։ Մարդասպանները չեն ձերբակալուած։

—Տօքթ. Լեփսիուս ցանկութիւն յայտներ է Ղալասարի որբանոցի տնօրէն Տ. Պաղտասարեանը պաշտօնանկ ընել, անոր տեղը դնելու համար հովիւ Պէրկմանը, որուն ամօթալի յարձակումը որբանոցին վրայ, անշուշտ կը յիշեն մեր ընթերցողները։ Տ. Պաղտասարեան պատասխաներ է թէ որբանոցի սաները հայազգի ըլլալով, ինք չկրնար զանոնք յանձնել օտարի խնամքին առանց գիտութեան ազգ. վարչութեան որուն առջեւ պատասխանատու է ինք։

—«Մշակ»ի կը հաղորդեն թէ Թիֆլիզի Յովնանեան հայ դըպրոցին հոգաբարձութիւնը ռուս կառավարութեան յանձներ է թէ՛ դպրոցի շէնքը, գոյքը և թէ Անանովի՝ դպրոցին կտակած փառաւոր և աճագին «բասաժ»ը ու նիւթական նպաստները։ Գործը դեռ չէ վերջացեր։ Թուցէ պատճառը ան ըլլայ որ Անանովի ժառանգորդները դեռ ողջ ըլլալով, արդարացի առարկութիւններ հանած ըլլան կառավարութեան դէմ։

—Ռուսահայ թերթերը կը շարունակեն արձանագրել թէ ինչպէս ամէն օր քաղաքներու և գեղերու հայ դպրոցները իրենց գոյքերով մէկտեղ ստրկանութեան և գործակալի ներկայութեամբ ցուցագրուելով հայուն ձեռքէն կը յափշտակուին։

—Յուլիս 23ին Թուրքէժ հասեր են Այվազեան և Տէրունեան եպիսկոպոսները, առաջինը Սարպատականի և երկրորդը Սպահանի առաջնորդ։ Փառաւոր ընդունելութիւն է եղեր իրենց։ Բացի հայ հասարակութենէն, նորընտիր առաջնորդները ընդունելու գացեր են թագաժառանգին, ամիր-նիզամին, ոստիկանապետին, ինչպէս նաև եւրոպական հիւպատոսներուն ներկայացուցիչները։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

### ՋԻՆԱԴԱԴԱՐ

Մանիլ թէ և առնուած, բայց խռովութիւնները դեռ բոլորովին չեն դադրած։ Այս խառնակութեանց պատճառներն են Սկինալտօ ապստամբապետը իր ընդդիմութիւններով, ապստամբութեան լայն ծաւալը ամբողջ արշիպեղագոսին մէջ, ինչպէս նաև գերմանական միջամտութիւնները որոնք մերթ ընդ մերթ երեւան կուգան զանազան ձեւերու տակ։ Ապստամբները բնաւական չեն կախեր զինադադարին և յաճախակի ընդհարումներ կունենան սպանիացիներուն հետ։ Այս վերջինները 500 ապստամբ ջարդած՝ և բազմաթիւ գեղեր կրակի տուած են։ Ապստամբները այժմ Ալպէյի մէջ խմբուած են սպանիացւոց նահանջը կտրելու համար։ Ամերիկեան իշխանութիւնները զօրաւոր միջոցներ ձեռք առած են խաղաղութիւնը վերահաստատելու։

Բուպան ալ բաւական մտատանջութիւններ կը պատճառէ Ամերիկայի։ Ոչ միայն համաճարակը բազմաթիւ զոհեր կընէ բանակին մէջ, այլ նաեւ ըմբոստութեան նշաններ կան կարգ մը վաշտերու վրայ որոնք մեծ մասով սեւամորթերէ բաղկացած են։ Նոր զօրքեր ղրկուած են Սանթիակօ։ Շաֆթէր զօրավարը ազդու և սպառնալից յայտարարութիւն մը ուղղած է բոլոր այն ապստամբներուն որ կը յամառին Մ. Նահանգաց կամքին դէմ։

—Ամերիկեան Նիւ-Եորք զրահաւորը Հաւանա և Ս. Ժուան փոխադրած է զինուորական յանձնաժողովները որոնք պաշտօն ունին Բուպաի և Բօրթօ Րիքօի պարպուելու պայմանները կարգադրելու։

—Տօվակալ Սամըսնի յաղթական նաւատորմը որ ամսոյս 9ին Նիւ-Եորքի նաւահանգիստը մտած է, խանդագին ցոյցերու առարկայ եղեր է։

—Մանիլի վերջին պատերազմին մէջ մեռնող ամերիկացիներուն թիւը 8 է, վիրաւորուածներուն 45։ Իսկ սպանիացւոց կորուստը 150էն 600 մարդ։ Ամերիկացիք 11,000 գերի բռնած են, և գրաւած են 23,000 հրացան և բազմաթիւ թնդանօթներ։

### ԹՈՒՐՔԻԱ

«Ֆօսսիշ» լրագրի Պոլսոյ թղթակիցը կը հաղորդէ թէ Սուլթանին խորհուրդ տուողներ կան երբեւակ նիզակա՛ցութեան մէջ մտնելու։ Սակայն Սուլթանը և քանի մը ազդեցիկ պալատականներ հակառակ են այդ մտքին և կուզեն զինուորական այնքան կարեւոր ուժ մը գոյացնեն որով կարենան ոչ միայն պալքանեան տէրութիւններու դիմադրեն այլ և ի հարկին ջախջախել լմցնել զանոնք։ Նոյն թղթակիցը կը հաղորդէ նաեւ թէ Վիլհէլմի Թուրքիոյ տալիք այցելութեան գլխաւոր նպատակն է, Փոքր-Ասիոյ մէջ գերմանական մեծ գաղթականութիւններ հաստատելու արտօնութիւնը ձեռք բերել Սուլթանէն։ Վիլհէլմ այս առաջարկը պիտի ընէ գիտնալով թէ Փոքր-Ասիոյ մէջ գերմանական գաղութ մը միշտ իր գոյութիւնը պիտի պահէ, փոխանակ Նոր Աշխարհի գաղթականներուն պէս ամերիկացիներուն հետ ձուլուելու։

Սուլթանը շատ նեղը մնացած է, որովհետեւ Վիլհէլմի առաջարկը ընդունելով Ռուսիոյ վրէժխնդրութիւնը գրգռած պիտի ըլլայ։

—Վերջերս Բ. Դրան և օսմ. պանքայի միջեւ տեղի ունեցած կարգադրութեան մը համաձայն, այս վերջինը յանձն առած է ռուսական յետնեալ տուգանքները վճարելու համար հարկ եղած գումարները հայթայթել, իբր երաշխաւորութիւն ընդունելով մաքսերու և երկրագործական դրամատուններու վրայ քաշուած փոխանակագրեր։

### ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Յայտնի է թէ երկար ատենէ ի վեր այս երկու վիթխարի պետութիւններու մէջ ահեղ պատերազմի մը հաւանականութիւնը կայ հորիզոնին վրայ։ Շահերու հակառակութիւնը գաղթային շատ մը կէտերու վրայ, և հիւսիսային պետութեան փառասիրութիւնները անշուշտ օր մը անխուսափելի պիտի դարձնեն ընդհարումը։ Կռուի հաւանականութիւնը վերջերս ա՛լ աւելի շեշտուած է։ Անշուշտ հետաքրքրական է գիտնալ թէ Ֆրանսա ինչ դիրք կրնայ բռնել ապագայ պատերազմին մէջ։ Այս մասին, ֆրանսացի նշանաւոր քաղաքագէտ մը իր կարծիքը յայտներ է «Տէյլի Նիւզ»ի թղթակցին, ըսելով թէ Ֆրանսան երբեք չկրնար բայց ի բաց Ռուսիոյ կողմը բռնել. որովհետեւ Անգլիա իր հզօր նաւերով իսկոյն անբռա՛ի կրնայ վերածել բոլոր ֆրանսական ծովեզրերը։ Ասկէց զատ շատ դիւրին է իրեն համար Ֆրանսայի ափրիկեան և ասիական կալուածներուն մէջ ապստամբութիւն յարուցանել, իրեն օժանդակ ունենալով ծովերուն վրայ՝ ճարոնը իսկ Եւրոպայի մէջ՝ Իտալիան։

### ԱԶԴ

Արժ. Պատ. Հայկ Ս. Խաչատրեան պիտի քարոզէ հայերէն լեզուով պուլկար բողոքականաց եկեղեցին, վաղը, կիրակի, առաւօտեան ժամը 9ին։


### ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէ՞ք վաճառատան լաւ պաշտօնեայ մը. դիմեցէք Շարժումի խմբագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինը տարիէ իվեր կառավարական պաշտօն կը վարէ եւ տոմարակալութեան ճիւղին համար Վառնայի առեւտրական դպրոցներէն վկայուած է։

ՎԱՐԴՕ

### ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

—)·(—

)( Գին 1 Ֆրանք )(

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտօն Կոչի մօտ. Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշեղ Արծրունիի քով։

Մօտերս մամուլէն կը յանձնուի նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը»։

### Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ–Լուսանկարիչ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Ծօպրիչի մէջ լուսանկարչատուն մը հաստատած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաև իւղաներկ եւ գարաքալէմ պատկերներ։

Այլ եւ այլ քաղաքներէ անոնք որ կը փափաքին իրենց իւղաներկ կամ քարաքալէմ պատկերը ունենալ, փափկութեամբ եւ ճշգրիտ նմանութեամբ գծուած, թող փութան ղրկել իրենց լուսանկարը յիշեալ լուսանկարչատունը։ Գիները յոյժ չափաւոր։ 7—10

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

—)·(—

ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԵՆԷՆ ՑԵՏՈՅ

—)·(—

ԳԻՆ 1 ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը։

### ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ"Ի

—)·(—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հաշւետոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրօշիւրներ։

Գիներն յոյժ դիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։


Печатница „Взаимность“ Варна.